ծովեզերեայ քաղաքներէն մին է. ան կառուցուած է կլիմայական երկրորդ գօտիին սահմանին վրայ։ Հոն կը գտնուի Հաշիմ Իպն Մանաֆի դամբարանը։ Իսթախրի 951ին, և Իպն Հօքալ 978ին կը գրեն. «Գազան վերջին քաղաքն Պաղեստինի տարածութեան դէպի Եգիպտոս, ճիֆար երկրին մէջ։ Հաշիմ Իպն Ապտ Մանաֆի դամբարանը հոն է. և ծննդավայրն է Մուհամմէտ Իպն Իտրիս էշ-Շաֆիի (Օրինաց մեծ ուսուցչին). ան թաղուած է Ֆոսդայի մէջ (հին Գահիրէ)։ Հոն գտնուած է նաև Օմար Իպն էլ-Խատտապ խալիֆան. շատ կանուխ ժամանակները Գազան մեծապէս հարստացած է. հոն կայ Հիճազի ժողովրդեան համար մեծ շուկայ մը»։ 985ին Մուգաssksի կը գրէ. «Եգիպտոսի պողոտային վրայ ընդարձակ քաղաք մ'է, անապատի եզերքը։ Քաղաքը ծովեզրէն շատ հեռի չինուած չէ։ Հոն կայ գեղեցիկ մըզկիթ մը, և կը տեսնուի նաև Օմար խալիֆային յիշատակարանը. հոն է նաև ծննդավայրը մեծ աւանդապաշտին Էշ-Շաֆիին և հոն դամբարան ունի Հաշիմ Իպն Ապտ Մանաֆ (Մարգարէին մեծ հայրը)»։ 1154ին Իտրիսի կը գրէ. «Գազան այժմ շատ բազմամարդ է, և կը գտնուի Յոյներուն (Խաչակրաց) ձեռքը։ Գազայի նաւահանգիստը կը կոչուի Թիտա (կամ Թէտա)»։ Ասքուլ Ֆիտա (ԺԳ. դար) Իսթախրին յիշելէ յետոյ կը գրէ. «Գազան միջակ տարածութեամբ քաղաք մ'է. ծովեզերքը պարտէզներ ունի։ Արմաւենիները հոն քիչ են. պտղաւէտ այգիները բազմաթիւ են։ Գազայի և ծովին միջև կան աւազակոյտեր, որոնց մէկ կողմը կը գտնուին պարտէզներ։ Գազայի վերև չինուած է փոքր միջնաբերդ մը»։

1355ին Գազա այցելած է Իպն Պաթութահ։ Ան իր Օրագրութեան մէջ անոր մասին կը խօսի իբր Սիւրիոյ առաջին քաղաքը Եգիպտոսէն յետոյ. «ան բազմամարդ է և ընդարձակ. ունի շատ մզկիթներ։ Բայց ան իր շուրջը պարիսպ չունի։ Հոն կայ հնագոյն գեղեցիկ մզկիթ մը. ներկայիս կայ ուրիշ մ'ալ էմիր Ճավալիէն շինուած. հոյակապ շինուածք մ'է ան, և ունի սպիտակ մարմարէ բեմ մը» (Palestine under the Moslems, էջ 441–442)։